ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՐՃԵՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մեղրի համայնքի հարգելի՛ բնակիչներ, սիրելի՛ կարճևանցիներ,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս՝ Կարճևան գյուղի օրվա առթիվ:

Այս տոնական օրը մեր պատմության, մեր արմատների և մեր միասնականության խորհրդանիշն է:

Այսօր մենք պարտավորվում ենք շարունակել մեր նախնիների գործը, պահպանել նրանց թողած ժառանգությունը և մեր ջանքերով ամրացնել գյուղի վաղվա օրը:

Հայրենասիրությունը սկսվում է մեր գյուղից՝ մեր օջախից, մեր հողից:

Կարճևանը, որի մասին հիշատակվել է դեռևս 10-րդ դարում, այսօր էլ շարունակում է մնալ հարատևության, աշխատասիրության և միասնության խորհրդանիշ:

Մենք հպարտ ենք մեր գյուղով, մեր մարդկանցով ու այն ամենով, ինչ ստեղծվել է սերնդեսերունդ՝ նվիրումով ու սիրով:

Ի սրտե շնորհակալություն եմ հայտնում Կարճևան գյուղի վարչական ղեկավար Գարիկ Ջանյանին և բոլոր կարճևանցիներին՝ գյուղի զարգացման գործում ցուցաբերած նվիրումի, միասնականության և հոգատարության համար:

Ձեր աշխատանքի, ձեր հավատքի ու ձեր սրտի ջերմությամբ է, որ Կարճևանը շարունակում է ապրել, շնչել և զարգանալ:

Սիրենք մեր գյուղը, մեր համայնքը, սիրենք այն, ինչ ստեղծել են մեր նախնիները, և շարունակենք աշխատանքը՝ հանուն մեր ապագայի, հանուն մեր երեխաների:

Թող յուրաքանչյուրիս գործն ու նվիրվածությունը դառնան ամուր հիմք Կարճևանի պայծառ ապագայի համար:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս այս տոնական, խորհրդանշական և պատմական օրվա կապակցությամբ:

Թող խաղաղությունը, համերաշխությունն ու բարօրությունը թևածեն յուրաքանչյուր կարճևանցու ընտանիքում:

Թող Կարճևանի անունը միշտ հնչի հպարտությամբ, հավատքով ու սիրով:

Շնորհավոր տոնդ, սիրելի՛ Կարճևան: